ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԴՎԻՆ ՀՆԱՎԱՅՐԻ ՇԵՐՏԱԳՐՄԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ՝ ԸՍՏ 2013 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

Դվինի միջնաբերդի պեղումների արդյունքները բացահայտել են մ. թ. ա. III հազարամյակից մ. թ. XIII դարն ընդգրկող մշակութային շերտեր: Նախորդ տարիներին՝ «Արշակունյաց գահադահլիճի»[1] (IV դ.) և արաբ ոստիկանի պալատական համալիրի (VIII դ.) պեղումների ժամանակ, միջնաբերդի՝ գագաթի պեղված վերին՝ XI-XIII դդ. շերտերը մանրամասն չափագրվել են ու լուսանկարվել, այնուհետև՝ մեծ մասը վերացրել: Այս բազմաշերտ հնավայրի հնագիտական իրավիճակի համեմատական վերլուծությունը շերտագրական սանդղակը լրացնելու և հստակեցնելու հնարավորություն է ընձեռում:

Միջնաբերդի տարածքում առանցքային նշանակություն ունի IV դ. կառուցված «Արշակունյաց գահադահլիճը» (տե՛ս նկ. 1, b-b-3+4 քառակուսիները): Բացահայտ են սույն եռանավ շինության շերտագրական առնչություններն անտիկ ժամանակաշրջանի (մ. թ. ա. II-մ. թ. II դդ.) շինարարական հորիզոնների հետ: Գահադահլիճի տակ նկատելի են հյուսիսից, հարավից և արևմուտքից հարող անտիկ կառույցների զգալի հատվածներ: Դրա ստորին հորիզոնում կավածեփ, վերինում կրաշաղախե հատակները պահպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ անտիկ շերտի ամբողջական նկարագրի վերականգնումն անհնար է: Մինչդեռ գահադահլիճի արևմտյան թևի a-b-3-1 քառակուսիների հատվածում դեռևս VIII դ. սկզբին արաբ ոստիկանի պալատական համալիրի արևելյան հարկաբաժինները կառուցելիս նշված հատակների մակերևույթից խորացել են: Հատակների բացակայությունը հնարավորություն ընձեռեց մ. թ. IV դ. նախորդող անտիկ հորիզոններ հայտնաբերելու ակնկալիքով 2013 թ. պեղումներ կատարել -a-b-2-1 քառակուսիների (50 մ^2) հատվածում:

Գահադահլիճի արևմտյան թևի նշված սահմաններում հաջորդաբար ուրվագծվեց հետևյալ հնագիտական պատկերը.

- վերին մշակութային հորիզոններում (ընդհանուր հզորությունը՝

[1] «Արշակունյաց գահադահլիճը» (այսուհետև՝ գահադահլիճ), ըստ 1960-1961 թթ. պեղումների արդյունքների, Արշակունիներին վերագրվող IV դ. գահանիստ դահլիճ է (տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. II, Եր., 1982, էջ 88-96), իսկ ըստ 1985 թ. պեղումների՝ վաղքրիստոնեական հայկական եկեղեցի (տե՛ս **A. Kalantarian,** Dvin. Histoire et Archeologie de la ville medievale, Paris, 1996, էջ 63-66):

0,30 մ, խորությունը՝ 0,30 ÷-0,60 մ)[2] տարբերակվեցին զարգացած միջնադարի (X-XI դդ.) 33, անտիկ ժամանակաշրջանի (մ. թ. ա. II-մ. թ. I դդ.) 67, վաղ երկաթեդարի (մ. թ. ա. X-VIII դդ.) 35 խեցաբեկորներ,

- հաջորդ՝ մոխրառատ հորիզոններում (խորությունը՝ 0,60 ÷ 0,90 մ) խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորների հետ մեկտեղ հայտնաբերվեցին X-XI դդ. կարասների, ծափերի, կճուճների, խոշոր կժերի, սափորների, տաշտերի, դրոշմազարդ խուփերի և «անգոբով նկարազարդված» ջնարակած թասերի հարուստ տեսականի (250 բեկոր)[3], ինչպես նաև անտիկ ու վաղ երկաթե դարի մոտ երկու տասնյակ խեցատներ[4],

- ստորին մոխրախառն հորիզոններում (խորությունը՝ 0,90 ÷ 1,20 մ) թրծած դեղնավուն աղյուսների կտորտանքի և թափված քարերի տակ ճզմված վիճակում հայտնաբերվեցին անհամեմատ ավելի մեծ քանակի X-XI դդ. ամբողջացող կժեր, սափորներ, «անգոբով նկարազարդված» կամ թույլ փորագիր, բուսական պատկերներով ջնարակածածկ թասեր[5] և երկաթե դանակի, գամի, ապակե սրվակի բեկորներ:

Զարգացած միջնադարին հատկանշական նյութերով (նկ. 2) հագեցած տվյալ շերտը նստած էր վաղ երկաթե դարի՝ մ. թ. ա. VIII դ. առաջին քառորդի մոխրառատ հորիզոնի վրա՝ X-XI դարերում տոփանված, կավե շաղախով սվաղված հատակին (խորությունը՝1,20 մ):

Շերտագրական նույնօրինակ պատկեր բացահայտվեց նաև գահադահլիճի հյուսիսարևմտյան անկյունում (a-3 քառ.) 2,0x1,80 մ հետախուզահորը պեղելիս: Սա վաղ երկաթեդարի համատարած մոխրաշերտի վրա տոփանված, կավածեփ հատակին՝ X-XI դդ. կարասների, կճուճների, խուփերի և հատկապես հարդաշաղախ կավով ծեփված թոնիրների՝ կլորավուն շուրթով ուղղաձիգ պատերի՝ շուրջ մեկ հարյուրյակի հասնող բեկորներով հագեցած շերտ էր (խորությունը՝ 1,20 ÷ 1,50 մ): Նույն տեղում հայտնաբերվեցին նաև մ. թ. ա. II-մ. թ. I դդ. և մ. թ. ա. X-VIII դդ. սակավաթիվ խեցատներ:

Սննդամթերք ամբարելու, վերամշակելու, պահելու և տեղափոխելու X-XI դդ. կարասների, ծափերի, կճուճների, խոշոր կժերի, սափորների, տաշտերի, խուփերի, թոնիրների բեկորների, ինչպես նաև ածխացած փայտի ու մոխրի, խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորների առատության իրողությունն այստեղ հավաստում է տնտեսական պահանջներ բավարարող խոհանոց-շտեմարանների և թոնրատան երբեմնի գոյությունը:

---

[2] Բոլոր չափումները տրված են գահադահլիճի կրաշաղախե հատակի (-4, 05 մ) մակարդակից:

[3] Սափորներից երկուսը ամբողջացան, կճուճներից մեկը՝ մասամբ, իսկ մնացած սպասքը բեկորային վիճակում է:

[4] Սրանք անտիկ ժամանակաշրջանի տափաշշի, թասի, ըմպանակի և վաղ երկաթե դարի՝ փորագիր սերմնազարդ պատկերներով, ուռուցիկ ոլորագծերով բոլորված, թխագույն անոթների սակավաթիվ բեկորներ են:

[5] Սրանք ժամանակին բնորոշ՝ առանց նստուկի կամ նուրբ օղակավոր նստուկով, ներս հակված կամ շեշտակի դուրս փռված պսակով թասեր են:

Այսպիսով, պեղված ամբողջ տարածքում ակնհայտ է X-XI դդ. նյութերի, այդ թվում նաև փլվածքներում կուտակված, ժամանակին լայնորեն կիրառվող, 4-5 սմ հաստությամբ, թրծած, դեղնավուն աղյուսների մեծ քանակությունը: Ընդ որում՝ հատակի վրա հայտնաբերված «անգոբով նկարազարդված» ջնարակածածկ խեցանոթների բեկորները (նկ. 2, 6) որոշակիորեն աղերսվում են 894 թ. մեծ երկրաշարժից հետո կառուցված շինություններում փաստագրված համանման խեցեղենի խմբին[6]: Իրավամբ, միջնաբերդի պեղումները ևս հաստատում են, որ նոր հատակագծային ցանցով լայնածավալ կառուցապատում է իրականացվել X-XI դարերում:

Գահադահլիճի -a-b-2-1 քառ. հատվածում 25 մ^2 շերտագրական բարձունքի՝ 1985 թ. պեղումների ընթացքում բացահայտվել է մ. թ. IV-XIII դարերն ընդգրկող յոթ շինարարական շրջափուլ[7]: Զարգացած միջնադարի՝ X-XI դդ. մոտ 70 սմ հզորությամբ շերտում բացվել է կրաշաղախով սվաղված, երկկողմանի քարաշար պատ՝ ներքուստ բազմերանգ որմնանկարի հետքերով: Պատի սվաղի բեկորներից մեկի վրա կա ներկով արված թռչնապատկեր: Ըստ Ա. Քալանթարյանի՝ «պատի կատարման շինարարական տեխնիկան բնորոշ է միջնաբերդի մյուս հատվածներում անմիջապես 894 թ. մեծ երկրաշարժից հետո իրականացված կառուցապատմանը»[8]:

Այս ամենը վկայում է, որ տնտեսական պահանջներ բավարարող նկուղային, իսկ վերնահարկում՝ որմնանկարներով հարդարված հարկաբաժինները համաժամանակյա են: Այստեղ հավանաբար երբեմնի երկհարկանի շինություն է եղել[9]:

X-XI դդ. և IX դ. մշակութային շերտերի միջև փաստագրված մակարդակների ընդամենը 15-20 սմ տարբերությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, «որ երկրաշարժից հետո փուլ եկած շենքերի տեղը հարթեցվել և նոր կառուցապատում են կատարել գրեթե նույն մակարդակի վրա»[10]: Արդ, 2013 թ. պեղումների արդյունքների համեմատական վերլուծությամբ պարզվում է, որ միաժամանակ յուրացվել է գահադահլիճի արևմտյան թևի նաև մասամբ խորացված հատվածը:

---

[6] Տե՛ս **Կ. Գ. Ղաֆադարյան**, **Ա. Ա. Քալանթարյան,** Դվին II. Դվին քաղաքը և նրա պեղումները (1973-1980 թթ.), Եր., 2002, էջ 91:

[7] Այդ մասին մանրամասն տե՛ս **Кочарян Г., Калантарян А., Кафадарян К.** Античный слой на территории цетрального квартала и цитадели Двина // **Акопян Н. Г., Бабаян Ф. С., Жамкочян А. С., Калантарян А. А., Кафадарян К. К., Кочарян Г. Г.** Двин IV. Город Двин и его раскопки (1981-1985 гг.). Ер., 2008, էջ 139-142, աղ. XII, 1:

[8] Նույն տեղում, էջ 140-141, աղ. XIII, 1, 2:

[9] Քննվող ժամանակաշրջանում Դվինի միջնաբերդում երկհարկանի շինությունների և որմնանկար-հարդարանքների առկայության մասին տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Եր., 1952, էջ 126, 128, 134, **Ֆ. Բաբայան,** Նորահայտ շինություն Դվինի միջնաբերդում, «Լրաբեր հասարարական գիտությունների», 2018, № 3, էջ 332-333:

[10] **Кочарян Г., Калантарян А., Кафадарян К.** Античный слой на территории цетрального квартала и цитадели Двина, с. 141.

Այստեղ վերջնականապես համահարթեցվել են անտիկ հորիզոնները, և մ. թ. ա. VIII դ. առաջին քառորդին կործանված վաղերկաթեդարյան ամրոց-սրբավայրի վերին մոխրառատ հորիզոնի վրա X-XI դդ. կառուցել են երկհարկանի շինության նկուղային հարկաբաժինները:

«Արշակունյաց գահադահլիճից» հարավ-արևմուտք, -e-3-2 քառ. պեղավայրի շերտագրական իրավիճակների համատեքստում փաստագրվում է, որ տեղի է ունեցել X-XI դդ. մշակութային նստվածքների մասնակի ներթափանցում ուղղակի անտիկ ժամանակաշրջանի՝ տորաձև զույգ սյունախարսխով և բնորոշ խեցեղենով կառույցի մեջ: Այսինքն՝ համահարթեցվել են նախորդ բոլոր շերտերը, հատվել և զգալիորեն կրճատվել է անտիկ շերտի հզորությունը:

Այդօրինակ զանգվածային համահարթեցումներ բացահայտվել են միջնաբերդի նաև արևմտյան մասում: Այստեղ X-XI դդ. կառուցված և XII-XIII դդ. վերակառուցված, արտադրատնտեսական հարկաբաժիններից բաղկացած բնակելի համալիրի աղյուսե հատակի տակ հայտնաբերվել են անտիկ ժամանակաշրջանի խեցեղեն և կավե շաղախով ամրացված քարաշեն հիմնապատերի աղճատված մնացորդներ (b-a-16-13 քառ.): Իսկ որոշ հատվածներում անգամ բացվել է վաղերկաթեդարյան բնակավայրն ավերած՝ մ. թ. ա. VIII դ. մեծ հրդեհի գորշ մոխրաշերտը՝ բնորոշ թխագույն խեցեղենով և շինարարական մնացորդներով: Այսինքն՝ X-XI դդ. նախորդող շերտերը, ներառյալ անտիկ հորիզոնները, որոշ դեպքերում համահարթեցվել են:

Ընդ որում՝ միջնաբերդի արևմտյան մասի շերտերում (IX դ. մեծ երկրաշարժից հետո)՝ X-XI դարերի նոր և ծավալուն կառուցապատումից հատկապես զերծ մնացած հատվածներում (օր.՝ -d-9-8 քառ. և այլն), նկատվում են վաղմիջնադարյան և անտիկ մշակութային հորիզոններ:

Քննվող ժամանակաշրջանին առնչվող շերտագրական որոշ վերլուծություններ կատարվեցին նաև միջնաբերդի հարավարևելյան մասում՝ բարձունքի վրա (-d-1+1+2, -e-2-1+1 քառակուսիների տարածքում), 1987 թ. վերաբացված բաղնիքի մնացորդներում հայտնաբերված նյութի հիման վրա:

Այստեղ վերին՝ 0,40 մ ընդհանուր հզորությամբ հորիզոնները պեղելիս բացվեցին.

- զգալի մասը երկշերտ, մասամբ միաշերտ, թրծած աղյուսներով սալարկված կավակերտ հատակ,
- աղյուսե սալիկներով շարված, խորշեր ունեցող պատերի (չորս շարք բարձրությամբ պահպանված) աղճատված մնացորդներ,
- 4-5 աղյուսե սալիկներով շարված հենակներ (19x19x17 սմ), սրանց միջև՝ մասամբ կոտրված խոշոր աղյուսե սալեր (40x37x8 սմ):

Գործածված աղյուսե սալիկները գրեթե նույն չափերի են (19x19x3,5 սմ, 20x20x4 սմ, 21x21x4 սմ), և մի քանիսի ստորին մակերեսի վրա պահպանվել է վարպետի կամ արհեստանոցի նշան: Սա վկայում է նման աղյուսե սալիկների զանգվածային արտադրության մասին:

Այստեղ բացվեց երեք օջախ. մեկը ակով թոնիր էր (տր.՝ 0,95 մ, խոր.՝ 0,45 մ), որի արևմտյան եզրով ձգվում էր աղյուսե պատի քառաշար մի հատված: Թոնիրը լցված էր վառված, կարմիր գույն ստացած կավճանման նյութով՝ խեցանոթի շրթնամասի ու կավե հալոցի բեկորների պարունակությամբ: Թոնրի կողքին հայտնաբերվեցին երկաթե առարկաներ՝ սղոց, մանգաղ հիշեցնող դանակ, ճարմանդ: Մերձակա զույգ (0,65 մ, 0,68 մ տր., 0,60 մ, 0,40 մ խոր.) օջախները լցված էին հողով:

Այս հատվածի պեղումների պատմությանը ծանոթանալիս պարզվեց, որ դեռևս 1950-ականներին բլրի զրոյական մակարդակից 2,5 մ խորության մեջ բացվել է քննվող աղյուսաշեն շինությունը[11]: Սրա հյուսիսային երկայնքով՝ արևելքից արևմուտք, ձգվել է խորշերով աղյուսե պատը՝ աղյուսե սալիկների 12 շարք բարձրությամբ: Սա, արևմտյան հատվածում անկյուն կազմելով, ձգվել է դեպի հարավ: Սալարկված հատակը և աղյուսաշար հենակները բացվել են հաստ մոխրաշերտի մեջ, որտեղ ի հայտ են եկել վեց թոնիր-օջախ, իսկ արևելյան հատվածում՝ կարմիր տուֆե խարիսխ:

Պեղումների ականատես Ա. Լ. Յակոբսոնը բացված շինությունը համարել է բաղնիք: Մինչդեռ թոնրանման հնոցները, կաղապար հիշեցնող քարե առարկաները, պղնձե հալոցը արտադրական բնույթի կառույց են հուշում, և Կ. Ղաֆադարյանը սա համարել է պղնձագործական արհեստանոց:

Ըստ շերտագրության՝ թոնիր-օջախները և երկաթե առարկաները հայտնաբերվել են աղյուսե հատակի կամ պատի տակ, հետևաբար պղնձագործական արհեստանոցը նախորդել է բաղնիքին: Այսինքն՝ արտադրական կառույցի գործունեությունը դադարելուց հետո այն մասամբ հարթեցվել է, այնուհետև շարվել է նոր շինության հատակը:

Այսպիսով, վերստին բացվում է XI դ. թվագրվող բաղնիքի հատվածը, որի ընդհատակյա ջեռուցման համակարգի մասին են վկայում աղյուսաշար հենակները և դրանք ժամանակին ծածկած խոշոր սալերի մնացորդները (հմմտ. 1947 թ. միջնաբերդում բացված աղյուսաշեն բաղնիքը)[12]:

Պեղավայրի հարավարևմտյան մասում (-e-1 քառ.)՝ բաղնիքի շերտի մեջ, ի հայտ եկան նախորդ տարիներին մինչև հատակ չպեղված, XII-XIII դդ. իջեցուկ հորի մնացորդներ: Մինչդեռ բաղնիքի մնացորդների տակ (-d-1, -e-1 քառ. սահմանագծին և -e-1 քառ.) միմյանց հարևանությամբ բացվեցին X դ. և X-XI դդ. թվագրվող հորեր: Շերտագրական դիտարկումները ցույց են տալիս, որ եթե XII-XIII դդ. հորի մնացորդները բացվել են բաղնիքին պատկանող շերտի մեջ, ապա X դ. և X-XI դդ. հորերը՝ վերջինիս տակ: Այսինքն՝ աղյուսաշեն բաղնիքի շինությունն իրավամբ թվագրվում է ոչ ուշ, քան XI դ. վերջով:

---

[11] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. II, էջ 29-32, նկ. 11, 12, տե՛ս նաև Է. Խանզադյանի 1955 թ. և Կ. Ղաֆադարյանի 1955 թ. դաշտային օրագրերը (պահվում են Դվինի հնագիտական արշավախմբի գրադարանում):

[12] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, էջ 62, 136-138:

Այստեղ X-XI դդ. շերտին նախորդեց 640 թ. արաբական ավերիչ արշավանքի հետևանքով մոխրաշերտի վերածված VII դ. շինարարական հորիզոնը: Իսկ նույն տեղում հայտնաբերված IX դ. մի քանի խեցանոթների և ապակե բաժակի բեկորները երկրաշարժից հետո համահարթեցված համաժամանակյա շերտի սոսկ երբեմնի գոյության վկայություններն են: Պեղվող տարածքում՝ վաղմիջնադարյան նստվածքների արդեն ստորին հորիզոններում, մշակութային շերտի նկարագիրը զգալիորեն փոխվեց, և ակնհայտ դարձավ անտիկ ժամանակի հիմնապատերը վերստին օգտագործելու իրողությունը վաղ միջնադարում:

Այսպիսով, 2013 թ. և ավելի վաղ կատարված պեղումների արդյունքների համեմատական քննությունը հանգեցնում է միջնաբերդի շերտագրության որոշակի ճշգրտումների: Դվին բազմաշերտ հուշարձանի տարբեր շրջափուլերի յուրաքանչյուր ուսումնասիրություն նպաստում է բացակայող մշակութային հորիզոնները վերականգնելու և հնավայրի շերտագրական ամբողջական պատկերը համալրելու շարունակական գործընթացին:

Բանալի բառեր - *Դվին հնավայր, միջնաբերդ, հնագիտական աղբյուրներ, մշակութային շերտեր, շերտագրական սանդղակ*

ГАЯНЭ КОЧАРЯН – *Уточнения стратиграфии городища Двин по результатам раскопок 2013 г.* – В процессе длительных раскопок в цитадели Двина были обнаружены культурные слои с III тыс. до н. э. по XIII в. н. э. Исследования археологических и письменных источников и сравнительный анализ их результатов свидетельствуют, что после сильнейшего землетрясения 894 г. площадка на вершине холма густо застраивалась гражданскими сооружениями. На различных этапах интенсивной застройки X–XI вв. из-за нивелирования предыдущих культурных слоёв значительно исказилась стратиграфическая шкала многослойного памятника. Таким образом, жилые комплексы и разветвлённые хозяйственные помещения X–XI вв. оказались непосредственно на слоях античного периода или периода раннего железа.

Ключевые слова: *Двинское городище, цитадель, археологические источники, культурные слои, стратиграфическая шкала*

GAYANE KOCHARYAN – *Precisions of Dvin Site Stratigraphy due to 2013 Excavation Results.* – In the process of long-lasting excavation conducted on citadel Dvin cultural layers had been discovered since the 3rd millennium BC to the 13th century AD. Comparative analysis of the results of investigations based on archaeological and written sources testifies that the hilltop platform civil structures were built dense after the powerful earthquake of the 894 AD. In different stages of extensive construction of the 10-11th centuries AD because of leveling the previous cultural layers the stratigraphic scale of the multilayer site Dvin considerably had been damaged. Hence habitable complexes with branched household premises of the 10-11th centuries AD appeared immediately on the layers of the Classical period or of the Early Iron Age.

Key words: *Dvin site, citadel, archaeological sources, cultural layers, stratigraphic scale*

Նկ. 1

Դվին, միջնաբերդի կենտրոնական հատվածի ընդհանուր հատակագծի վերակազմության փորձ (ըստ 1950-2013 թթ. պեղումների նյութերի համադրության)

Չափագրությունը՝ Կորյուն Ղաֆադարյանի



Նկ. 2

Խեցանոթների նմուշներ Դվինի միջնաբերդից (X-XI դդ.)
1, 2, 3 հասարակ խեցեղեն (սափոր, կճուճ, դրոշմազարդ խփի բեկոր՝ հավասարաթև խաչի պատկերով). 4, 5, 6 ջնարակած խեցեղեն (թույլ փորագիր զարդապատկերով, բազմագույն, նկարազարդ և «անգոբով նկարազարդված» թասերի բեկորներ):

Լուսանկարները՝ Վռամ Հակոբյանի

Ներկայացվել է՝ 04.04.2019
Գրախոսվել է՝ 30.04.2019
Ընդունվել է տպագրության՝ 19.07.2019